

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գագիկ Մինասյանի և Արա Բաբլոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ (Պ-337-26.09.2013-ԱՄ-010/0, Պ-337<sup>1</sup>-26.09.2013-ԱՄ-010/0) սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

- նախագծի 1-ին հոդվածով ներկայացված՝ օրենքի 7-րդ հոդվածի նոր խմբագրության մեջ նախատեսել բացառություն այն դեպքերի համար, երբ ծխախոտային արտադրանքի անվանումը համընկնում է այլ հանրահայտ անվանման հետ (աշխարհագրական անվանում, տեղանուն, պատմամշակութային հուշարձան, ստեղծագործություն և այլն),

- ներկայացված օրենքների նախագծերի ընդունման դեպքում, հակասություններից

խուսափելու նպատակով, համապատասխան փոփոխություններ նախատեսել նաև «Հեռու-տատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որի 60-րդ հոդվածն անդրադառնում է մանկապատանեկան հեռուստահաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործմանը կամ ցուցադրմանը,

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում հստակեցնել, թե որ պետական մարմնի կողմից են քննվելու նախագծով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը,

- «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող փոփոխության՝ 7-րդ հոդվածի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, մասնավորապես, համարակալել 1-ին մասի 5-րդ ենթակետից և 5-րդ մասից հետո շարադրված մասերը,

- «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ օրենքների նախագծերում «պրոցես» բառը փոխարինել «գործողություն» բառով:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»  
և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության  
օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների  
նախագծերի վերաբերյալ**

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**<<Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումների կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումների կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական

հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### **ԵՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի և պատրաստվող հեռուստահաղորդումների ՀՀ տարածքում հեռարձակման ժամանակ ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»  
և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության  
օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների  
նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման**

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և  
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի  
(այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության  
գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման  
նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *արգելվում է Հայաստանի  
Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի և պատրաստվող հեռուստահաղորդումների՝ ՀՀ  
տարածքում հեռարձակման ժամանակ ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը, ինչպես  
նաև սահմանվում են պատժամիջոցներ այդ դրույթի խախտման համար* և Նախագծի ընդունման  
դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա  
ազդեցություն **չի նախատեսվում:**

### Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական  
իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ  
կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և  
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի  
փաթեթով առաջարկվում է սահմանել, որ՝

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի և պատրաստվող հեռուստա-  
հաղորդումների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման ժամանակ

արգելվում է ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը,

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի և հեռուստահաղորդումների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման ժամանակ ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ նշյալ խախտումը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի և հեռուստահաղորդումների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման ժամանակ ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրման համար ներկայումս վարչական տուգանքներ նախատեսված չեն՝ գտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական: Վերջինիս չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով եկամտատեսակի բնույթից:

Իսկ ինչ վերաբերում է ծախսերի գնահատմանը, ապա վերոնշյալ ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ելքերի փոփոխության չի հանգեցնում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը դրական ազդեցություն կունենա  
առողջապահության բնագավառի վրա:

#### Եզրակացություն

**«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումների կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումների կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական

պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական**

**ազդեցություն:**

Պ-337-26.09.2013-ԱՄ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «ԾԽԱԽՈՏԻ ԻՐԱՑՄԱՆ, ՍՊԱՌՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-72-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 7. Ծխախոտային արտադրատեսակների իրացման սահմանափակումները*

1. Ծխախոտային արտադրատեսակների իրացումը կազմակերպելիս անհրաժեշտ է՝

1) խուսափել ծխախոտային արտադրատեսակի կեղծ, մոլորեցնող բնութագրի, առողջության վրա ծխախոտի ազդեցության, վտանգների կամ արտազատվող նյութերի մասին ոչ ճիշտ տեղեկություններ տարածելու միջոցով (ներառյալ՝ նկարագրությունը, առետրային պիտակը, խորհրդանիշը կամ այլ նշաններ, արտադրատեսակի պակաս վնասակարությունը եւ այլն) ծխախոտային արտադրատեսակի վաճառքից.

2) արգելել ծխախոտային արտադրատեսակը որպես այլ ապրանքատեսակների վաճառքի խթանման միջոց կամ այլ շահադրդման ձեւ առաջարկելը.

3) չնշել ծխախոտային արտադրատեսակների անվանումներն ու ապրանքային նշանները մարզական հանդերձանքի եւ գույքի, խաղալիքների, տիկնիկների, մրցավազքային մեքենաների մանրակերտների, տեսաշարային, ձայնային եւ տեսաձայնաշարային խաղերի, քաղցրավենիքի կամ նմանատիպ այլ առարկաների վրա.

4) արգելել ծխախոտային բոլոր արտադրատեսակների կամ դրանց նմուշների անվճար տարածումը քարոզչության նպատակով.

5) արգելել ծխախոտային ցանկացած արտադրատեսակի անվանումը կամ ապրանքային նշանը կրող ապրանքների (կարճաթեւ վերնաշապիկներ, գլխարկներ, մարզական վերնաշապիկներ, արեւապաշտպանիչ հովարներ, ուսապարկեր, արեւային ակնոցներ, գրենական պիտույքներ, որոնք կրելիս կամ գործածելիս աչքի են զարնում եւ տեսանելի են դիմացինին) տարածումը, վաճառքը կամ որպես պարգեատրում (մրցանակ) առաջարկելը:



Սույն դրույթը չի արգելում ծխախոտային արտադրատեսակների անվանումների եւ ապրանքային նշանի զետեղումը ծխելու հետ առնչվող այնպիսի պիտույքների վրա, ինչպիսիք են հրահաններն ու մոխրամանները:

Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների հովանավորությունը միջազգային իրադարձությունների, միջոցառումների ժամանակ կամ դրանց մասնակիցների շրջանում:

2. Ծխախոտային ցանկացած ապրանքատեսակ ներառում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) հաստատած նախազգուշացում՝ մարդու առողջության վրա ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ:

3. Ծխախոտային արտադրատեսակների վաճառքն արգելվում է՝

1) 18 տարին չլրացած անձանց.

2) 18 տարին չլրացած անձանց կողմից.

3) բաց տուփերով կամ հատով.

4) առանց վաճառողի անմիջական մասնակցության (իրացումը վաճառքի ավտոմատ համակարգի, էլեկտրոնային կամ մեխանիկական այլ սարքավորումների միջոցով), բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վայրերի, որտեղ անչափահասների մուտքն արգելվում է.

5) առողջապահական, կրթական, մանկական, դաստիարակչական հաստատություններում, մարզական դահլիճներում, համալիրներում, մարզադաշտերում եւ առողջարաններում.

6) առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշի.

7) եթե ծխախոտի արտադրանքի տուփի վրա չի նշված քանակը (համապատասխանաբար՝ հատերով կամ գրամներով).

8) եթե տուփի վրա փակցված չէ ծխախոտում թունավոր բաղադրիչների պարունակության ծավալը (նիկոտին, խեժ), կամ դրանց պարունակությունը գերազանցում է թույլատրելի սահմանաչափը.

9) եթե տուփի վրա զետեղված չէ ծխելու վնասակարության մասին լիազորված մարմնի հաստատած նախազգուշացումը.

10) եթե ապրանքային նշանը կեղծված է, կամ ապրանքների արտադրությունը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

4. Ծխախոտի վաճառքի բոլոր կետերում՝ դրամարկղերի մոտ կամ դրանց հարակից տարածքներում, տեսանելի մասում պարտադիր փակցվում են հետեւյալ նախազգուշացումները.

1) 18 տարին չլրացած անձանց ծխախոտ չի վաճառվում.

2) լիազորված մարմնի զգուշացումները՝ մարդու առողջության վրա ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ:

5. Ծխախոտային արտադրատեսակների իրացմամբ զբաղվող բոլոր անձինք ծխախոտային արտադրատեսակների վաճառքն իրականացնելիս 18 տարեկանից ցածր արտաքին տեսք ունեցող քաղաքացիներին պարտավոր են ծխախոտ չվաճառել:

Եթե գնորդը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, վարորդական իրավունքի կամ զինվորական ծառայության վկայական), ապա միայն այդ դեպքում ծխախոտային արտադրատեսակի իրացմամբ զբաղվողը կարող է կատարել ծխախոտի վաճառք:»:

**Հոդված 2.** Օրենքի 8-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի եւ պատրաստվող հեռուստահաղորդումների Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման ժամանակ արգելվում է ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-337/-26.09.2013-ԱՄ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքի 173.3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասերով.

«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի եւ պատրաստվող հեռուստահաղորդումների Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման ժամանակ ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» եւ ,Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

««Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» եւ ,Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ծխելու բարձր տարածվածությամբ պայմանավորված առողջական, սոցիալական, բնապահպանական եւ տնտեսական հետեւանքները կանխելու անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ ծխախոտի օգտագործումը մահվան կանխարգելիչի պատճառների շարքում առաջինն է: Այն նպաստում է սրտանոթային, շնչառական հիվանդությունների, քաղցկեղի (առավելապես՝ թոքի քաղցկեղի) եւ մի շարք այլ քրոնիկ հիվանդությունների զարգացմանը, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված հաշմանդամության եւ մահացության թվի աճին:

Հայաստանում հատկապես մտահոգիչ է ծխելու տարածվածությունը տղամարդկանց շրջանում, որն ըստ վիճակագրական տվյալների, 2010 թ. կազմել է 63.0%: Այս ցուցանիշը զգալիորեն բարձր է տարածաշրջանի այլ երկրների համեմատությամբ (օր՝ Մոլդովա՝ 51.0%, Ուկրաինա՝ 52.0%): Մեր երկրում կանանց շրջանում ծխելու տարածվածությունը կազմում է մոտ 2.0%, սակայն առկա են դրա տարածվածությանը նպաստող միտումներ:

Բազմաթիվ երկրներ ընդունել են հակածխախոտային օրենսդրություն, որը տարբեր արգելքներ եւ պատժամիջոցներ է նախատեսում ծխախոտի գովազդի եւ հանրային վայրերում ծխելու համար: Մեր երկրում գործող «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքն ընդգրկում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի» հիմնական դրույթները, սակայն ծխելու ցուցանիշները Հայաստանում շարունակում են մնալ բարձր:

Միջազգային փորձը փաստում է, որ հեռուստաթերով ծխախոտի օգտագործման ցուցադրումն անուղղակիորեն գովազդում է ծխախոտային արտադրատեսակները եւ նպաստում ծխելու տարածվածությանը: Այդ առումով, հատկապես խոցելի եւ դեռահասները: Հաշվի առնելով Հայաստանում ծխախոտի օգտագործման բարձր ցուցանիշները՝ առաջարկում ենք կատարել լրացում «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքում, ըստ որի Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ֆիլմերի եւ պատրաստվող հեռուստահաղորդումների ՀՀ տարածքում հեռարձակման ժամանակ կարգելվի ծխախոտի օգտագործման պրոցեսի ցուցադրումը, ինչպես նաեւ սահմանել պատժամիջոցներ այդ դրույթի խախտման համար՝ կատարելով լրացումներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում:

«Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ եւ 8-րդ հոդվածների վերնագրերը համընկնում են: Ըստ բովանդակության, օրենքի 7-րդ հոդվածում սահմանված են ծխախոտի իրացման, իսկ 8-րդ հոդվածում՝ ծխախոտի վաճառքին վերաբերող դրույթներ: Հաշվի առնելով այն, որ «վաճառքը» հանդիսանում է «իրացման» տեսակ, եւ այն, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի նրա բովանդակությանը, առաջարկում ենք օրենքի 7-րդ եւ 8-րդ հոդվածները վերախմբագրել միասնական հոդվածի տեսքով: